Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
օգոստոսի 9-ի N 898 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ ՄԵԿՆԵԼԻՍ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԻՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույն կարգով և պայմաններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողների տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով զինծառայողներ են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում, ազգային անվտանգության ծառայությունում, ոստիկանությունում, քրեակատարողական ծառայությունում զինվորական կամ քրեակատարողական կամ քաղաքացիական հատուկ ծառայության մեջ գտնվող անձինք:

3. Սույն կարգի համաձայն փոխհատուցվում են նաև զինծառայողի հետ արձակուրդի անցկացման վայր մեկնող և արձակուրդի անցկացման վայրից վերադարձող զինծառայողի ամուսնու (կնոջ) և 18 տարին չլրացած երեխաների (այսուհետ՝ զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամ) տրանսպորտային ծախսերը՝ սույն կարգի 7-րդ կետում սահմանված չափերով:

4. Սույն կարգի համաձայն արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալու համար զինծառայողի, ինչպես նաև զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամի տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ զինծառայողին օրենքով սահմանված

դեպքերում տրվող լրացուցիչ արձակուրդի, որի պարագայում փոխհատուցման ենթակա են լրացուցիչ արձակուրդի բոլոր դեպքերում արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալու տրանսպորտային ծախսերը:

5. Սույն կարգի համաձայն արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալու համար զինծառայողի, ինչպես նաև զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամի տրանսպորտային ծախսերի փոխհատուցումն իրականացվում է զինծառայողին արձակուրդ տալու մասին իրավասու հրամանատարի (պետի) հրամանի կամ արձակուրդային թերթիկի հիման վրա և ոչ ուշ, քան զինծառայողի՝ արձակուրդի անցկացման վայր մեկնելու օրը կամ զինծառայողի ցանկությամբ՝ արձակուրդից վերադառնալուց հետո 3-օրյա ժամկետում: Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստանալու համար զինծառայողն արձակուրդ տալու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) անունով ներկայացնում է զեկուցագիր՝ դրանում նշելով արձակուրդի անցկացման վայրը և իրեն ուղեկցող ընտանիքի անդամների քանակը:

6. Արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են հետևյալ չափերով՝

1) մինչև 30 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 600 դրամ.

2) 30-60 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1000 դրամ.

3) 60-100 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1200 դրամ.

4) 100-150 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2000 դրամ.

5) 150-200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2400 դրամ.

6) 200-250 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 3000 դրամ.

7) 250-300 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 6000 դրամ.

8) 300-350 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 8000 դրամ.

9) 350 և ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 10000 դրամ:

7. Արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողին ուղեկցող ընտանիքի յուրաքանչյուր անդամի տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան չափի 50 տոկոսով:

8. Սույն կարգի 6-րդ կետում նշված համապատասխան չափով տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից հրապարակված՝ Հայաստանի Հանրապետության վարչական տարածքների միջև հեռավորությունները:

9. Զինծառայողի, ինչպես նաև զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամի՝ արձակուրդի անցկացման վայրում գտնվելու հանգամանքը հիմնավորվում է զինծառայողի արձակուրդային թերթիկում կամ արձակուրդի հրամանի պատճենի դարձերեսին արձակուրդի անցկացման վայրի զինվորական կոմիսարի կամ սույն կարգի 2-րդ կետում նշված համապատասխան մարմնի տարածքային ստորաբաժանման կամ համատիրության նախագահի (թաղային լիազորի) կամ արձակուրդը հանգստի ծառայություն մատուցող կազմակերպությունում անցկացնելու դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից դրված ստորագրությամբ և կնիքով: Սույն կետում նշված հիմնավորման բացակայության դեպքում զինծառայողը տրանսպորտային ծախսերի փոխհատուցում իրականացրած ստորաբաժանմանն է վերադարձնում իրեն վճարված գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ